ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԼԱՆՋԻԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ ԳՅՈՒՂ. ԼԱՆՋԻԿ

ՀՄԻ 60060
Է/Լ. 2110150 lanjikgavapetaran@mail.ru

„27„ դեկտեմբերի 2016թ.
N 107

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ՝
ՊԱՐՈՆ Հ. ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սիմոնյան

Ձեզ ենք ներկայացնում ՀՀ Շիրակի մարզի Լանջիկ համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 24-ի թիվ 9 նիստով ընդունված թիվ.թիվ 20-Ն և 23 որոշումները փոփոխություններով:

Առդիր 10 թերթ:

Հարգանքով՝

Լանջիկ համայնքի ղեկավար՝ Արա Մաթևոսյան

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
Մուտք թիվ 13449-16
27. 12 16թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԼԱՆՋԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Լանջիկ համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, գ.Լանջիկ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2016թվականի N 20-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԼԱՆՋԻԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ, ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 3-Ի ԹԻՎ 18-Ն ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ, 19-րդ հոդվածների, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ և 11-րդ հոդվածների , «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետի դրույթներով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Լանջիկ համայնքի ավագանին ո ր ո շ ո ւ մ է.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Լանջիկ համայնքում 2017թվականի համար սահմանել տեղական տուրքերի, վճարների տեսակների և համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը, համաձայն՝ հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել համայնքի ավագանու 2015թվականի դեկտեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Լանջիկ համայնքում 2016թվականի համար տեղական տուրքերի, վճարների տեսակների և համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերի սահմանման մասին» թիվ 18-Ն որոշումը:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳԱԼՈՅԱՆ ՍԿՐՏԻՉ
2. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐԱՍ
3. ՍԵԼԻՔՅԱՆ ՁՈՅԱ
4. ՍԻՆԱՍՅԱՆ ՍԻՄՈՆ
5. ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՂԻՆԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԱ ՄԱՐԴՈՅԱՆ

2016թվական նոյեմբերի «24»
գյուղ Լանջիկ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Լանջիկ համայնքի
ավագանու 2016 թվականի
նոյեմբերի 24-ի թիվ 20-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԼԱՆՋԻԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2017ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ, ՏՈՒՐՔԵՐԻ ՈՒ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԵՎ ՀԱՄԱՅՔԻ ԿՈՂՄԻՑ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1.Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան նոր շենքերի, շինությունների (ներառյալ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝

հիմնական օբյեկտների համար՝

1) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝
4500 (չորս հազար հինգ հարյուր) դրամ.

2) սույն կետի «1)» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

ա. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝
9000 (ինը հազար) դրամ

բ. 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝
12000 (տասներկու հազար) դրամ.

գ. 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝
15000 (տասնհինգ հազար) դրամ.

դ. 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝
30000 (երեսուն հազար) դրամ.

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

3) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար
900 (ինը հարյուր) դրամ.

4) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար
1500 (մեկ հազար հինգ հարյուր) դրամ:

2. Համայքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման ուժեղացման, վերանորոգման, արդիականացման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում; ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 900 (ինը հարյուր) դրամ.

2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վարականգման կամ արդիականացման աշխատանքներից նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն ապա ,բացի սույն կետի «1)» -ին ենթակետով սահմանված դրույքաչափի՝ կիրառել նոր շինարարության համար 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության մասով

3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում; ստորգետնյա) շինարարություն կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա սույն օրենքի իմաստով այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառել նոր շինարարության համար 1-ին կետով սահմանված նորմերը.

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝

1500 (մեկ հազար հինգ հարյուր) դրամ.

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանել՝

1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 2500 (երկու հազար հինգ հարյուր) դրամ

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 10.001 (տաս հազար մեկ) դրամ

գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 13.001 (տասներեք հազար մեկ) դրամ

դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 20.001(քսան հազար մեկ) դրամ

ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 25.001 (քսանհինգ հազար մեկ) դրամ

զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 40.001 (քառասուն հազար մեկ) դրամ

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 2500 (երկու հազար հինգ հարյուր) դրամ

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 10.001 (տաս հազար մեկ) դրամ

գ.51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 13.001 (տասներեք հազար մեկ) դրամ

դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 20.001 (քսան հազար մեկ) դրամ

ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 25.001 (քսանհինգ հազար մեկ) դրամ

զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 45.001 (քառասունհինգ հազար մեկ) դրամ

5. Համայնքի տարածքում՝
1) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանել յուրաքանչյուր օրվա համար 200(երկու հարյուր) դրամ, մեկ քառակուսի մետրի համար,

2) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել

150000 (մեկ հարյուր հիսուն հազար) դրամ,

3) խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝ 30 000(երեսուն հազար) դրամ.

4) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանել՝
հիմնական շինությունների ներսում՝
ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 2000 (երկու հազար) դրամ
բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 5.001 (հինգ հազար մեկ) դրամ
գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար մինչև 10.001 (տասս հազար մեկ) դրամ
դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 15.001 (տասնհինգ հազար մեկ) դրամ
ե.201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 20.001 (քսան հազար մեկ) դրամ
զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 30.001 (երեսուն հազար մեկ) դրամ

ոչ հիմնական շինությունների ներսում՝
ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 100 (մեկ հարյուր) դրամ
բ.26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 1.001(մեկ հազար մեկ) դրամ
գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 2.001 (երկու հազար մեկ) դրամ
դ.101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 4.001 (չորս հազար մեկ) դրամ
ե.201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 8.001 (ութ հազար մեկ) դրամ
զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 15.001 (տասնհինգ հազար մեկ) դրամ

5)Համայնքի սեփականության հանդիսացող տարածքներում կազմակերպված վճարողի ավտոկայանատեղերում ավտոտրանսպորտային միջոցը կամ դրա կցորդը կայանելու համար տեղական տուրք սահմանել՝
ա. յուրաքանչյուր մեկ ժամվա համար՝ 200 (երկու հարյուր) դրամ
բ. յուրաքանչյուր մեկ օրվա համար՝ 1500 (մեկ հազար հինգ հարյուր) դրամ

գ. մեկ շաբաթվա համար՝ 4000 (չորս հազար) դրամ
դ. մեկ ամսվա համար՝ 16000 (տասնվեց հազար) դրամ
ե. մեկ տարվա համար՝ 80000 (ութսուն հազար) դրամ

6.Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար յուրաքանչյուր տարվա համար տեղական տուրքը սահմանել՝
50000 (հիսուն հազար) դրամ:

7. Համայքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24:00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիք տարվա համար սահմանել՝

1) առևտրի օբյեկտների համար՝ 25000 (քսանհինգ հազար) դրամ.

2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50000 (հիսուն հազար) դրամ.

3) բաղնիքների (սաունաների) համար՝ 250000 (երկու հարյուր հիսուն հազար) դրամ.

4) խաղատների կազմակերպման համար՝ 500000 (հինգ հարյուր հազար) դրամ.

5) շահումով խաղերի կազմակերպման համար՝ 300000 (երեք հարյուր հազար) դրամ.

6) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100000 (մեկ հարյուր հազար) դրամ.

8. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանել՝

1) ալկոհոլային ապիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1500 (մեկ հազար հինգ հարյուր) դրամ

2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 3000 (երեք հազար) դրամ

3) այլ արտաքին գովազդի համար՝ 1000 (մեկ հազար) դրամ
4) սոցիալական գովազդի համար 0 դրամ
Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդի դատարկ գովազդային վահանակների մեկ քառակուսի մետրի դիմաց սահմանել տեղական տուրքը 250(երկու հարյուր հիսուն) դրամ:

Եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը, ապա համապատասխան բյուջե վճարել յուրաքանչյուր քառակուսի մետրի համար100 (մեկ հարյուր):

4) դատարկ գովազդային վահանակների համար 700 (յոթ հարյուր) դրամ
9. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեներ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացին տարվա համար սահմանել՝ 0 (զրո) դրամ:

10.Հայաստանի Հանրապետության համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝
50000 (հիսուն հազար) դրամ.

11. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝ 5000 (հինգ հարյուր) դրամ

12.Համայնքի տարածքում բաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայություններ իրականացնելու և (կամ) մատուցելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 0 դրամ:

13. Համայնքի տարածքում մասնավոր գերեզմանատան շահագործման թույլտվության համար տեղական տուրքը սահմանել յուրաքանչյուր տարվա համար՝

1) 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝
2.500.000 (երկու միլիոն հինգ հարյուր հազար) դրամ.

2) 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝
5.000.000 (հինգ միլիոն) դրամ.

3) 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝
7.000.000 (յոթ միլիոն) դրամ.

4) 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝
10.000.000 (տասս միլիոն) դրամ:

14. Տեղական վճարներ՝

1) Համայքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու ու հաստատելու ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար՝ համայնքի տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարը սահմանել՝ 3000 (երեք հազար) դրամ.

2) Համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց 1 հա-ի համար փոխհատուցման վճարը սահմանել՝
2500 (երկու հազար հինգ հարյուր) դրամ.

3) Համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝ մեկ մասնակցից վճարը սահմանել 1500 (մեկ հազար հինգ հարյուր) դրամ.

4) Աղբահանության վճարը սահմանել՝

ա. կենցաղային աղբի համար
ըստ հաշվառված անձանց քանակի համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար ամսական 50(հիսուն) դրամ, կամ ըստ բնակելի շինության կամ բնակարանի ընդհանուր մակերեսի մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 5 (հինգ) դրամ.

բ. ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար

ըստ ծավալի մեկ խորանարդ մետր աղբի համար	500 (հինգ հարյուր) դրամ, կամ
ըստ զանգվածի մեկ տոննա աղբի համար	1000(մեկ հազար) դրամ:

5) Շինարարության ավարտական ակտի ձևակերպման համար, ինչպես նաև շահագործման թույլտվություն տրամադրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց վճարման վճարը սահմանել՝ 2000 (երկու հազար) դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԱ ՄԱՐԴՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԼԱՆՋԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Լանջիկ համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, գ.Լանջիկ,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2016թվականի N 23

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԼԱՆՋԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԼԱՆՋԻԿԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ » ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ , ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 3-Ի ԹԻՎ 20 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի, 31-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի, 1-ին կետի «բ» ենթակետի դրույթներով և համաձայն Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի 2006 թվականի նոյեմբերի 29-ի N55-Ա հրամանի N41 հավելվածով հաստատված «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Լանջիկի գյուղապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկի» Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Լանջիկ համայնքի ավագանին ո ր ո շ ո ւ մ է.

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Լանջիկի համայնքապետարանի աշխատակազմի 2017 աշխատակիցների քանակը՝ 6 միավոր և «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Լանջիկի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության 2017թվականի աշխատակիցների քանակը՝ 7 միավոր:

2.Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Լանջիկի համայնքապետարանի աշխատակազմի և «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Լանջիկի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության 2017 թվականի աշխատակիցների հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը, համաձայն՝թիվ1 և թիվ2 հավելվածների:

3. Ուժը կորցրած ճանաչել համայնքի ավագանու 2015թվականի դեկտեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Լանջիկի համայնքապետարանի աշխատակազմի և « Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Լանջիկի մանկապարտեզ,, համայնքային ոչ առևտրային կազմակերպության 2016թվականի աշխատանիցների թվաքանակի, հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերի հաստատման մասին» թիվ 20 որոշումը:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳԱԼՈՅԱՆ ՍԿՐՏԻՉ
2. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐԱՄ
3. ՍԵԼԻՔՅԱՆ ՁՈՅԱ
4. ՍԻՆԱՍՅԱՆ ՍԻՄՈՆ
5. ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՂԻՆԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԱ ՄԱՐԴՈՅԱՆ

2016թվական նոյեմբերի «24»
գյուղ Լանջիկ

Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Լանջիկ համայնքի ավագանու
2016 թվականի նոյեմբերի 24-ի թիվ 23 որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԼԱՆՋԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Հ/Հ	Պաշտոնի անվանումը	Հաստիքի քանակը	Պաշտոնային Դրույքաչափը /դրամ/	Պաշտոնային դրույքաչափի տոկոսաչափը համայնքի ղեկավարի պաշտոնային դրույքաչափի նկատմամբ
Համայնքային ծառայության պաշտոններ				
1	Աշխատակազմի քարտուղար /1.2-1/	1	130000	73,03
2	Առաջատար մասնագետ-հաշվապահ/3.1-1/	1	128500	72,19
3	Առաջատար -մասնագետ /3.1-2/	1	128500	72,19
Տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմ				
4	Գրադարանավար/ուսի/	1	85000	47,75
5	Տնտեսվար	1	85000	47,75
6	Հավաքարար	1	75 000	42,13
Ընդամենը		6	632000	

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԱ ՄԱՐԴՈՅԱՆ

Հավելված N2
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Լանջիկ համայնքի ավագանու
2016 թվականի նոյեմբերի 24-ի թիվ 23 որոշման

« ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԼԱՆՋԻԿԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ»
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

NN	Անվանում	Սահմանված դրույքաչափ	Հաստիքի քանակը	Սահմանված դրույքը	Պաշտոնային դրույքաչափը	Պաշտոնային դրույքաչափի տոկոսաչափը համայնքի ղեկավարի պաշտոնային դրույքաչափի նկատմամբ (%)
1	տնօրեն	90000	1	1	90000	50,56
2	հաշվապահ	72752	1	1	72752	40,87
3	դաստիարակ	80000	1	1	80000	44.58
4	դայակ-սանիտար	72752	1	1	72752	40,87
5	խոհարար	77904	1	1	77904	43,76
6	բակապահ	77904	1	1	77904	43,76
Ընդամենը			6		471312	

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԱ ՄԱՐԴՈՅԱՆ